

2.01.00 – ԱԳՐՈՆՈՄԻԱ

2.01.01 – ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀԻԴՐՈՄԵԼԻՈՐԱՑԻԱ ԵՎ ԱԳՐՈՔԻՄԻԱ

Երկրագործություն

Բույսի կյանքի անհրաժեշտ գործոնները: Բույսի պահանջը դրանց նկատմամբ:

Երկրագործության օրենքները և դրանց տեսական հիմունքները: Երկրագործության օրենքները և ագրոտեխնիկան:

Հողի օդային և ջրային ռեժիմների փոխադարձ կապը և դրա կանոնավորումը:

Հողի ջերմային ռեժիմի կանոնավորումը տարբեր բնահողային գոտիներում:

Հասկացություն մոլախոտային բուսականության մասին, դրանց հասցրած վնասը գյուղատնտեսությանը: Մոլախոտերի կենսաբանական առանձնահատկությունները, բազմացման և տարածման ձևերը:

Մոլախոտերի հաշվառման մեթոդները և պայքարի համակարգը:

Մոլախոտերի դեմ նախազգուշացնող և ոչնչացնող պայքարի միջոցառումների էությունը:

Մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական եղանակը:

Մոլախոտերի դեմ պայքարի քիմիական և կենսաբանական եղանակները:

Հերբիցիդների դասակարգումը, ազդման բնույթը, կիրառման ձևերը և ժամկետները:

Հողի մշակման գիտական հիմունքները և խնդիրները:

Հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները: Հողի նվազագույն մշակումը:

Հողի մշակման եղանակները: Հիմնական մշակում:

Ցրտահերիկի մշակման համակարգը տարբեր նախորդներից հետո:

Խոզանի երեսվարի ագրոտեխնիկական նշանակությունը:

Հողի մակերեսային մշակումը, դրա ձևերը:

Հողի հատուկ մշակման եղանակները:

Հողի նախացանքային մշակումը վաղ և ուշ ցանվող գարնանացանների համար:

Հողի մշակումը աշնանացանների համար տարբեր նախորդներից հետո:

Հողի մշակման առանձնահատկությունները էրոզիայի ենթակա վայրերում և ջրովի պայմաններում:

Հողի հետցանքային մշակումը տարբեր մշակաբույսերից հետո:

Հասկացություն ցանքաշրջանառության մասին, դրա հիմունքները:

Բույսերի հաջորդականության պատճառները:

Ցանքաշրջանառությունների ագրոտեխնիկական և տնտեսական դերը:

Տարբեր մշակաբույսերի և ցելերի դերը որպես նախորդ:

Ցելերը, դրանց դասակարգումը և նշանակությունը ցանքաշրջանառության մեջ:

Մաքուր և զբաղված ցելեր, դրանց ագրոտեխնիկական և կիրառման պայմանները:

Ցանքաշրջանառությունների դասակարգումը և դրանց հիմնական օղակները:

Միջանկյալ մշակաբույսերը ցանքաշրջանառության մեջ:

Ցանքաշրջանառությունների նախագծումն ու իրացումը, դրանց խնդիրները:

Ցանքաշրջանառությունների գնահատումը:

Հասկացություն երկրագործության համակարգերի մասին:

Երկրագործության համակարգերի պատմական զարգացման սխեման:

Երկրագործության ժամանակակից համակարգի գլխավոր և բաղկացուցիչ մասերը:

Հողագիտություն

Հասկացողություն հողի հիմնական հատկության՝ բերրիության մասին:

Բերրիության տեսակները: Հողի բերրիության բարձրացման ուղիները:

Հողի հանքային մասի առաջացումը: Հողառաջացնող մայրատեսակները, դրանց կարգաբանումը:

Ապարների հողմահարման գործընթացը, հողմահարման ձևերը: Հողմահարման դերը հողառաջացման գործում:

Հողի մեխանիկական կազմը: Հողերի կարգաբանումն ըստ մեխանիկական կազմի: Հողի մեխանիկական կազմի դերը դրա հատկությունների և ռեժիմների ձևավորման գործում:

Հողագոյացման գործընթացի էությունը: Կենդանի օրգանիզմների դերը հողառաջացման գործում:

Հասկացություն բուսական ֆորմացիաների մասին, դրանց խմբավորումները և դերը հողագոյացման գործընթացում:

Հողի հումուսը, դրա քանակական ու որակական կազմը: Հումուսի դերը հողագոյացման և հողի բերրիության ստեղծման գործում: Օրգանական նյութերի կուտակումն ու տարրալուծումը տարբեր բնական պայմաններում:

Հողի պրոֆիլի ձևավորումը և դրա մորֆոլոգիական (ձևաբանական) հատկանիշները:

Հողի կլանողականությունը, կլանման ձևերը:

Հողային լուծույթը, դրա դերը բույսի կյանքում և գյուղատնտեսական նշանակությունը: Հողային լուծույթի հիմնական հատկությունները, դրանց կարգավորման ուղիները:

Հողի ստրուկտուրան, դրա ագրոնոմիական նշանակությունը: Հողի ստրուկտուրայի հիմնական հատկությունները, առաջացման գործոնները և քայքայման պատճառները:

Ջրի ձևերը հողում, շարժման օրենքները, մատչելիությունը բույսերի համար:

Հողի ջրային հատկությունները, դրանց բարելավման միջոցառումները:

Հողի ջրային ռեժիմը, դրա տիպերը, կարգավորման ուղիները:

Հողի օդի կազմը, օդային ռեժիմը, կարգավորման ուղիները:

Հողի ջերմային հատկությունները, ջերմային ռեժիմի կարգավորման ուղիները:

Հողակազմող գործընթացի գործոնները: Վ.Դոկուչակի ուսմունքը հողակազմող գործընթացի գործոնների մասին:

ՀՀ բնահողային գոտիները և հիմնական հողային տիպերը:

Կիսաանապատային գորշ հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բարելավումը, կուլտուրականացումը:

Ոռոգելի մարգագետնային գորշ հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:

Շագանակագույն հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:

Սևահողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:

Գետահովտադարավանդային հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:

Անտառային դարչնագույն հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:

Անտառային գորշ հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները:

Մարգագետնատափաստանային հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, օգտագործումը:

Հողի էրոզիան, դրա տեսակները, պայքարի միջոցառումները: Էրոզացված հողերի կարգաբանումը, կառուցվածքի և հատկությունների կրած փոփոխությունները:

Հողային կադաստր և դրա բաղկացուցիչ մասերը: Հողային կադաստրի դերը արդյունավետ հողօգտագործման հարցում:

Մելիորացիա

Աղուտ-ալկալի հողեր, դրանց առաջացումը, հատկությունները, մելիորացիան:

Աղերի առաջացումը և կուտակումը Արարատյան հարթավայրի հողերում:

Աղուտ-ալկալի հողերի առաջացումը, հատկությունները:

Աղակալած հողերի մելիորացիայի ագրոտեխնիկական և կենսաբանական մեթոդները:

Աղուտ-ալկալի հողերի քիմիական մելիորացիան:

Մելիորանտի և լվացման ջրի նորմաների հաշվարկը:

Հողերի պահպանումը երկրորդային աղակալումից:

Ճահճային հողերի առաջացումը, հիմնական հատկությունները:

Ճահճային հողերի մելիորացման առանձնահատկությունները, կուլտուրականացումը:

Քարքարոտ հողերի մելիորացման առանձնահատկությունները, կուլտուրականացումը:

Հողերի դեգրադացման պատճառները, համալիր միջոցառումների կիրառումը դրանք կանխելու և վերացնելու ուղղությամբ:

Ագրոքիմիա

Ագրոքիմիական գիտության դերը հողերի բերրիության պահպանման և մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում: Ագրոքիմիական գիտության ժամանակակից պրոբլեմները:

Բույսի քիմիական կազմությունը (սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր): Բնահողային պայմանների և պարարտանյութերի կիրառման ազդեցությունը այդ օրգանական նյութերի սինթեզի վրա:

Ազոտի դերը մշակաբույսերի սննդառությունը բարելավելու և բերքատվությունը բարձրացնելու գործում: ՀՀ տարբեր բնահողային գոտիներում առաջատար մշակաբույսերի բերքատվությունը և բերքի որակը կապված ազոտական պարարտանյութերի կիրառման հետ:

Ֆոսֆորի դերը մշակաբույսերի ֆոսֆորային սննդառությունը կարգավորելու, բերքատվությունը բարձրացնելու և բերքի որակը բարելավելու գործում: ՀՀ տարբեր բնահողային գոտիներում առաջատար մշակաբույսերի բերքատվությունը կապված ֆոսֆորական պարարտանյութերի կիրառման հետ:

Կալիումի դերը մշակաբույսերի կալիումական սննդառությունը կարգավորելու, բերքատվությունը բարձրացնելու և բերքի որակը բարելավելու գործում: ՀՀ տարբեր բնահողային գոտիներում առաջատար մշակաբույսերի բերքատվությունը կապված կալիումական պարարտանյութերի կիրառման հետ:

Ծծումբի դերը բույսերի սննդառության, քիմիական կազմի և բերքի ձևավորման գործում:

Կալցիումի դերը բույսերի սննդառության, քիմիական կազմի և բերքի ձևավորման գործում:

Երկաթի և միկրոտարրերի դերը մշակաբույսերի աճի և բերքատվության բարձրացման գործում: ՀՀ-ում ներկայումս այդ տարրերը պարունակող պարարտանյութերը և դրանց արդյունաավետության բարձրացման ուղիները:

Միջավայրի ռեակցիայի ազդեցությունը բույսերի սննդառության և նյութերի փոխանակության վրա:

Աղերի կամ պարարտանյութերի ֆիզիոլոգիական ռեակցիան և նշանակությունը բույսերի հանքային սննդառության գործում:

Բույսերի օդային սննդառությունը /ֆոտոսինթեզ/, պարարտացումը որպես այն պայմանավորող գործոն:

Հողերի կլանողական հատկությունը, տեսակները, ազդեցությունը բույսերի սննդառության և պարարտանյութերի կիրառման արդյունավետության վրա:

Հողի քիմիական կլանման էությունը և ազդեցությունը սուպերֆոսֆատի ձևափոխությունների վրա: Սուպերֆոսֆատի կիրառման ժամկետները կապված դրանց քիմիական կլանման հետ:

Հողի ֆիզիկաքիմիական (փոխանակային) կլանման էությունը և կապը պարարտանյութերի կիրառման ժամկետների հետ:

Հողի կենսաբանական կլանման էությունը, մշակաբույսերի կողմից սննդատարրերի կլանումը բարձրացնելու ուղիները:

ՀՀ-ում կիրառվող գլխավոր ազոտական պարարտանյութերը, դրանց արդյունավետ կիրառման ձևերը, ժամկետները, չափաքանակները և ազդեցությունը մշակաբույսերի բերքատվության, բերքի որակի ու նիտրատների կուտակման վրա:

ՀՀ-ում կիրառվող գլխավոր ֆոսֆորական պարարտանյութերը, դրանց արդյունավետ կիրառման պայմանները, ժամկետները, չափաքանակներն ըստ մշակաբույսերի և հողի բերրիության վիճակի, ազդեցությունը մշակաբույսերի աճի բերքատվության ու բերքի որակի վրա:

ՀՀ-ում կիրառվող գլխավոր կալիումական պարարտանյութերը, արդյունավետ կիրառման պայմանները, ազդեցությունը մշակաբույսերի աճի, բերքատվության և որակի վրա:

ՀՀ-ում կիրառվող բարդ և համակցված պարարտանյութերը, դրանց արդյունավետ կիրառումը: ՀՀ-ում արտադրվող «Յեոկարբոֆոսի» հատկությունները, արդյունավետ կիրառումը:

ՀՀ-ում կիրառվող բակտերիական պարարտանյութերը (նիտրագին, ազոտաովիտ, Բայկալ - ՅՄ), ազդեցությունը հողում կենսաբանական ազոտի կուտակման և մշակաբույսերի բերքատվության վրա:

Օրգանական պարարտանյութերի (գոմաղբ, թռչնաղբ, կոմպոստ) պահպանումը (հասունացումը), կիրառումը:

Կուտակվող գոմաղբի քանակության հաշվարկի եղանակները:

Կենսահումուսի ստացումը, բաղադրությունը, ազդեցությունը մշակաբույսերի աճի, բերքատվության և սնկային ու բակտերիալ հիվանդությունները մեղմելու վրա:

Օրգանական գյուղատնտեսության վարման համակարգի էությունը, տարբերությունը ավանդական գյուղատնտեսությունից: Հողերի բերրության պահպանման (բարձրացման) ուղիները, կիրառվող պարարտանյութերը:

Մշակաբույսերի պարարտացման համակարգի նպատակը, էությունը, կազմելու սկզբունքների իրականացումը: Պարարտանյութերի կիրառման ձևերը (հիմնական, նախացանքային, ցանքակից, սնուցում):

Ծրագրավորվող բերքի ստացման համար պարարտանյութերի անհրաժեշտ քանակության հաշվարկի սկզբունքները:

Աշնանացան հասկավոր հացաբույսերի (աշնանացան և գարնանացան ցորեն, գարի, աշորա) պարարտացման առանձնահատկությունները տարբեր բնահողային պայմաններում:

Առվույտի, կորնգանի, ոլոռի, լոբու պարարտացումը:

Բանջարային մշակաբույսերի պարարտացման առանձնահատկությունները:

Պտղատու մշակաբույսերի պարարտացման առանձնահատկությունները, պարարտանյութերի կիրառման չափաքանակները, ժամկետները:

Խաղողի այգիների պարարտացման առանձնահատկությունները, պարարտանյութերի կիրառման չափաքանակները, ժամկետները:

Մշակաբույսերի պարարտացման պահանջի որոշման մեթոդները:
Պարարտանյութերի կիրառումը և շրջակա միջավայրի պահպանումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայրապետյան Է.Մ. - Հողագիտություն, Աստղիկ, Երևան, 2000 թ.
2. Հայրապետյան Է.Մ., Պետրոսյան Հ.Պ. - Մելիորատիվ հողագիտություն, Լույս, Երևան, 1987թ.
3. Հայրապետյան Է.Մ., Պետրոսյան Հ.Պ., Զաքոյան Ռ.Հ. - Հայկական ԽՍՀ հողերի մելիորացիան, կուլտուրականացումը և պահպանումը, Հայաստան 1990 թ.
4. Գալստյան Յ.Մ., Կարապետյան Ֆ.Հ., Մանուկյան Ռ.Ռ. - Երկրագործության հիմունքներ, Երևան, 2004, 105էջ
5. Գուլյան Ա.Ա., Մանուկյան Ռ.Ռ. - Երկրագործություն, Երևան, 2009, 228 էջ
6. Մանուկյան Ռ., Կարապետյան Ֆ. - Երկրագործություն հողագիտության հիմունքներով, Երևան, 2011թ. 217 էջ
7. Մովսիսյան Ե.Մ. - Ագրոքիմիայի հիմունքները. - Երևան, Հայաստան, 1971, - 463 էջ
8. Кауричев И.С. - Почвоведение, Колос, Москва, 1982., 496 с.

2. 01.02 - ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն

Դաշտային մշակաբույսերի խմբավորումը, դրանց մեջ ընդգրկված մշակաբույսերը:

Հացահատիկային մշակաբույսերի ընդհանուր բնութագրումը, դրանց աճման և զարգացման փուլերը: Աշնանացան և գարնանացան ցորենների տարբերությունները կենսաբանական առանձնահատկություններով:

Ցորենի հիմնական տեսակները ըստ գենետիկական խմբերի, Հայաստանում մշակվող աշնանացան և գարնանացան ցորենների բնութագրումը:

Աշնանացան և գարնանացան ցորենների մշակության տեխնոլոգիան և շրջանացված սորտերը:

Աշնանացան և գարնանացան գարու մշակության տեխնոլոգիան, Հայաստանում մշակվող սորտերը:

Եգիպտացորենի կենսաբանական առանձնահատկությունները, մշակությունը, հիմնական ենթատեսակները և սորտերը:

Աշորայի և ցորենաշորայի (տրիտիկալե) կենսաբանական առանձնահատկությունները, մշակության տեխնոլոգիան:

Հատիկաընդեղեն բույսերի մշակության նպատակը, Հայաստանում մշակվող հիմնական հատիկաընդեղեն մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները և սոյայի մշակության տեխնոլոգիան:

Յուղատու և եթերայուղատու մշակաբույսերի խմբավորումը, արևածաղկի, յուղատու կտավատի և խորդենու մշակության տեխնոլոգիաները:

Կարտոֆիլի կենսաբանական առանձնահատկությունները, մշակության տեխնոլոգիան: Կարտոֆիլի պալարների այլասերումը, պայքարի միջոցառումները: Կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրությունը:

Ծխախոտի մշակության տեխնոլոգիան, տերևաքաղը, տերևների նախնական մշակումը: Ծխախոտի հումքի որակի բնութագրումը, որակի գնահատման մեթոդները:

Առվույտի և կորնգանի կենսաբանական առանձնահատկությունները, մշակության տեխնոլոգիան և բերքահավաքը: Սերմնաբուծության առանձնահատկությունները:

Բակլազգի միամյա խոտաբույսերի (շաբդար, վիկ) կենսաբանական և մշակության առանձնահատկությունները:

Արմատապտղավոր մշակաբույսեր, շաքարի ճակնդեղի կենսաբանական առանձնահատկությունները, արմատապտղի քիմիական բաղադրությունը:

Շաքարի ճակնդեղի արմատապտղի հյութի լավորակության և շաքարի հավանական ելի որոշումը:

Դաշտային մշակաբույսերի խառը և միջանկյալ ցանքերը, դրանց նպատակը և անհրաժեշտությունը (բերել օրինակներ):

Բնական կերհանդակների բուսական ծածկոցի վերականգնումը մակերեսային և արմատական բարելավման միջոցով:

Թելատու մշակաբույսեր: Բամբակենու և վուշի կենսաբանական առանձնահատկությունները, մշակության տեխնոլոգիան:

Բրինձը և հնդկացորենը որպես կարևոր պարենային մշակաբույսեր, նրանց կենսաբանական առանձնահատկությունները, մշակության տեխնոլոգիան:

Կերի արմատապտուղներ, կերի ճակնդեղի կենսաբանական և մշակության առանձնահատկությունները:

Բարձրորակ սերմնանյութի դերը բերքատվության բարձրացման գործում, նրա ցանքային և սորտային որակը բնորոշող ցուցանիշները: Թարմ սերմերի ցածր ծլունակության պատճառները, դրանց հետքաղյա հասու-

նացման անհրաժեշտությունը: Սերմերի երկարակեցությունը, դրա վրա ազդող գործոնները:

Սերմնաբուծության բնորոշումը և խնդիրները: Սորտափոխանակում և սորտաթարմացում, դրանց նշանակությունը: Սելեկցիոն սորտերի բնորոշումը:

Սուպերէլիտայի և էլիտայի բնորոշումները, դրանց արտադրության մեթոդները (սխեմաները):

Գեներատիվ և վեգետատիվ ճանապարհով բազմացող մշակաբույսերի սերմնաբուծության առանձնահատկությունները:

Հետերոզիսի կիրառումը սելեկցիայում: Հետերոզիսի տեսական և գործնական նշանակությունը:

Մուտագենեզի բնորոշումը և կիրառումը սելեկցիայում: Մուտագեն գործոնների օգտագործման առանձնահատկությունները:

Ինքնափոշոտվող և խաչաձև փոշոտվող մշակաբույսերի սերմնաբուծության առանձնահատկությունները:

Միամյա և երկամյա մշակաբույսերի սերմնաբուծության առանձնահատկությունները:

Սերմերի սորտային մաքրության հսկողությունը սերմնադաշտում: Դաշտային ապրորացիան: Սերմերի հետբերքահավաքային մշակման, մաքրման և պահպանման տեխնոլոգիան:

Սեռական հիբրիդիզացիայի ձևերը: Կարգաբանական տեսակետից մոտիկ և հեռավոր հիբրիդիզացիայի տարբերությունները:

Անալիտիկ և սինթետիկ սելեկցիա, բնորոշումը, մեթոդները և եղանակները: Ծնողական ձևերի ընտրության, հիբրիդների խոտանման, հիբրիդների ընտրության հիմնական սկզբունքները:

Ելանյութ, բնորոշումը, ձևերը, սելեկցիայում դրանց օգտագործման առանձնահատկությունները:

Ներտեսակային և միջտեսակային հիբրիդիզացիա, բնորոշումը, բերել օրինակներ:

Սորտային և սերմնային հսկողության ձևերը, մշակությունը և արդի վիճակը: Սերմերի սորտային որակի և միատարրության վատացման պատճառները և կանխելու միջոցառումները:

Ջեմատներ: Նրանց կառուցվածքային առանձնահատկությունները: Պաշտպանված գրունտի տաքացման եղանակները, ջերմության պահանջի հաշվարկը ջերմատներում:

Բանջարային բույսերի հիդրոպոնիկ մշակությունը և նրա արդյունավետությունը: Լուսաթափանց թաղանթների օգտագործումը բանջարաբուծության մեջ:

Սաժիլների մշակության տեխնոլոգիան արևային և տաքացվող ջերմատներում:

Բանջարային բույսերի հողի և սերմերի նախացանքային մշակությունը: Ցանքի և սաժիլման ժամկետները և ձևերը: Սերմերի ցանքային հատկությունների որոշումը և ցանքի նորմայի կանոնավորումը:

Պոմիդորի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը բաց և պաշտպանված գրունտում:

Տաքդեղի և բադրիջանի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը բաց դաշտում և ջերմատներում:

Վարունգի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը բաց դաշտում և պաշտպանված գրունտում:

Վաղահաս գլուխ կաղամբի և ծաղկակաղամբի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը:

Միջահաս և ուշահաս գլուխ կաղամբի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը:

Ձմերուկի և սեխի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը բաց դաշտում և ջերմատներում:

Կանաչեղենների մշակության առանձնահատկությունները բաց և պաշտպանված գրունտներում:

Բանջարային լրբու և բամիայի կենսաբանական առանձնահատկությունները և մշակությունը:

Շամպինյոն սնկի մշակությունը:

Խաղողագործություն և պտղաբուծություն

Խաղողի վազի ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները: Խաղողի վազի վերգետնյա օրգանների աճի ու զարգացման օրինաչափությունները:

Խաղողի վազի աճման կենսաբանական փուլերը (ցիկլերը), հարաբերական, խորը, հարկադրական հանգիստ, 1-ին, 2-րդ, 3-րդ փուլերի նկարագրումը և այգում կատարվող աշխատանքները:

Խաղողի վազի էկոլոգիան: Բնակլիմայական պայմանների՝ ջերմության, խոնավության, լուսային և հողային գործոնների ազդեցությունը վազերի աճի ու բերքատվության վրա:

Հողամասի ընտրությունը, նախապատրաստումը, տեղաձևումը և խաղողի այգու հիմնումը: Խաղողի այգու հողի մշակությունը, պարարտացումը, ոռոգումը: Շպալերայի հիմնադրման առանձնահատկությունները այգիներում:

Խաղողագգիների ընտանիքի ծագումը, դասակարգումը և համառոտ բնութագրումը: Վազի արտաքին կազմությունը:

Վազի բազմացումը վեգետատիվ եղանակով, կտրոնների մթերումը, պահպանումը, կիչեցումը: Վազի բազմացումը անդալիսներով և պատվաստներով: Յուրարմատ տնկարանի կազմակերպումը և մշակությունը:

Էտի տեսական հիմունքները: Բերքատու օղակների կազմակերպումը:

Բերքատու վազերի էտը: Խաղողի վազի կանաչ հատումները:

Խաղողի սեղանի և տեխնիկական սորտերի բերքահավաքը:

Վազերի արագ ձևավորումը առանց բնի կամ ցածր բնով և սովորական բազմաթև ազատ հովհարանման համակարգերով:

Ցրտահարված և կարկտահարված վազերի էտը և վերականգման միջոցառումները: Չոր և կանաչ կապերը, այգեթաղի և այգեբացի գործընթացները:

Խաղողագործության արտադրության մասնագիտացումը և սորտաշրջանացումը ՀՀ-ում: Երիտասարդ և բերքատու այգիների խնամքը:

Պտղաբուծության մասնագիտացումը, տեղաբաշխումը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում: Պտղատեսակների արտադրական բերքատվությունը ՀՀ տարբեր արտադրական գոտիներում:

Պտղաբուծական արտադրության զարգացման և ինտենսիվացման գաղափարները, միջոցառումներն ու ուղիները:

Պտղատու բույսերի պտղաբերման օրինաչափությունները և պտղաբերությունն արագացնող պայմանները: Պտղատու բույսերի էտի և ձևավորման նոր համակարգերի առանձնահատկություններն ինտենսիվ տիպի այգիներում:

Պտղատեսակների սորտաշրջանացման խնդիրները, ներմուծվող նոր սորտերի ուսումնասիրության եղանակները: Հասկացողություն մշակաձևի /սորտ/, նույնակի /կլոն/ և պատվաստակալների մասին, նրանց շրջանացումը կախված հողակլիմայական պայմաններից:

Պատվաստակալների դերը նոր տիպի բարձր արդյունավետ տնկարկների ստեղծման և պտղաբուծության ինտենսիվացման գործում:

Պատվաստակալի և պատվաստացուի փոխներգործությունը, համատեղելիությունը և սերտաճը:

Հեռանկարային մշակաբույսերի և մշակաձևերի բազմացումը և մայրուտների հիմնումը: Պտղատու բույսերի տնկանյութի արտադրության արագացված տեխնոլոգիաները:

Թճուկային տնկանյութի բազմացման և աճեցման նորագույն եղանակները: Կլոնային /նույնակային/ պատվաստակալների արագ բազմացման ձևերը: Պտղատու բույսերի վիրուսազերծ տնկանյութի աճեցման տեխնոլոգիաները:

Թճուկային ինտենսիվ պտղատու այգիների աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման հնարավորությունները:

Թճուկային, ինտենսիվ տնկարկների հիմնական տիպերը: Թճուկային ինտենսիվ պտղատու այգիների առավելությունները դասական այգիների համեմատությամբ:

Պտղատու տեսակների, մշակաբույսերի /սորտերի/, պատվաստակալների և սորտապատվաստային զույգերի ընտրությունն ու տեղաբաշխումը այգում:

Մշակաձևերի /սորտերի/ տեղաբաշխումը այգում ըստ փոշոտման փոխադարձ հնարավորությունների և մշակության առանձնահատկությունների:

Պտղատու այգիների ոռոգման ու սնուցման տեխնոլոգիան կաթիլային և ենթահողային եղանակներով:

Բերքահավաքի կանխորոշման սկզբունքները և առանձնահատկություններն ըստ պտղատեսակների: Պտուղների քաղի և սպառողական հասունացման ժամկետների որոշումը ըստ պտղատեսակների և սորտերի:

Բերքի հետբերքահավաքային մշակման և պահպանման աշխատանքները ըստ պտղատեսակների: Պտուղների տեսակավորումն ու չափազատումն ըստ ստանդարտների ու շուկայի պահանջարկի:

Բույսերի պաշտպանություն

Ցորենի, գարու, վարսակի հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Հատիկաընդեղեն մշակաբույսերի գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Սոխի գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Ճակնդեղի գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Մորմազգի բանջարային մշակաբույսերի և կարտոֆիլի հիվանդությունները և պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Դդմազգի մշակաբույսերի գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Կորիզավորների գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Հնդավորների գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Խաղողի վազի հիմնական հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Հատապտղատուների գլխավոր հիվանդությունները, պայքարի միջոցառումների համալիրը դրանց դեմ:

Միջատների զարգացման առանձնահատկությունները:

Հատիկաընդեղեն մշակաբույսերի վնասատուների կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Ծխախոտի վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Ճակնդեղի գլխավոր վնասատուների կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Սոխի գլխավոր վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Վարունգի գլխավոր վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Բազմամյա թիթեռնաձողկավոր խոտաբույսերի վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Բոստանային մշակաբույսերի վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Կաղամբի վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Կարտոֆիլի վնասատուները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Խնձորենու կանաչ, կարմրագալ և բրդապատ լվիճները, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Պտղատուների վնասակար տզերը, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Խնձորենու արևելյան և սալորենու պտղակերներ, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Մանուշակագույն, թուրանական, հայկական ստորակետանման, կալիֆորնյան վահանակեր, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Պտղատուների ցեցեր (խնձորենու պտղացեց, արոսենու ցեց, շերտավոր պտղացեց, ռեկուրվարիա), դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Պտղատուների գեներատիվ օրգանների վնասատուներ՝ կազարկա, խնձորենու ձողկակեր, բալենու երկարակնճիթ, բալենու ճանճ, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Դեղձենու տերևային և ցողունային լվիճներ, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Տերևաղորներ՝ տանձենու, ամենակեր, բողբոջապտտան, պտղատերևաղոր, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Պտղաստուների կմախքային մասերի վնասատուները՝ կնճռոտ կեղևակեր, խնձորենու ապակեթիթեռ, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Բալենու լորձնոտ, տանձենու, խնձորենու և սալորենու դեղին սղոցողներ, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Ալոճենու, ակացիայի, գոտկավոր կեղծ վահանակրեր, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Խաղողի վազի վնասակար տզերը՝ այգու ոստայնատիզ, թաղիքատիզ, սովորական ոստայնատիզ, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Խաղողի վազի ֆիլոքսերան, դրա կենսակերպը և պայքարի միջոցառումների համալիրը դրա դեմ:

Խաղողի վազի վնասակար որդաններ և վահանակրեր, խաղողի ողկուզակեր, իմերեթյան թզուկ ցիկադ, թրիպս, դրանց կենսակերպը, պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Վնասատուների և հիվանդությունների դեմ կիրառվող պայքարի մեթոդների դասակարգումը և դրանց համառոտ բնութագրումը:

Պայքարի ինտեգրացված մեթոդը վնասատուների և հիվանդությունների դեմ, դրա էությունը և զարգացման հեռանկարները:

Բույսերի կարանտինը որպես պայքարի մեթոդ վնասատուների, հիվանդությունների և մոլախոտային բուսականության դեմ: ՀՀ համար կարանտինային համարվող վնասատուներն ու հիվանդությունները և պայքարի միջոցառումները դրանց դեմ:

Օգտակար միջատներ և տզեր (էնտոմոֆագեր, ակարիֆագեր), դրանց դերը վնասատուների քանակական կարգավորման գործում: Գիշատիչներ և մակաբույծներ:

Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի կենսաբանական և ագրոտեխնիկական մեթոդների էությունը, կիրառման բնագավառը և զարգացման հեռանկարները:

Պայքարի միջոցառումների համալիր խաղողի վազի հիվանդությունների և վնասատուների դեմ:

Պայքարի միջոցառումների համալիր պտղատու այգիների վնասատուների և հիվանդությունների դեմ առանց թունաքիմիկատների:

Սերմերի սիստեմային ախտահանիչներ (դիվիդենտ, ռաքսի), ֆիզիկոքիմիական առանձնահատկությունները, ազդման բնույթն ու օբյեկտները: Սերմերի ախտահանման եղանակները:

Պղինձ պարունակող ֆունգիցիդներ (բորդոյան հեղուկ, պղնձի օքսիքլորիդ, կուպրօքսատ), ֆիզիկաքիմիական առանձնահատկությունները, ազդման բնույթը և օբյեկտները:

Զոոցիդներ (էթիլֆենգին, կլերատ, շտորմ, գլիֆտոր), ազդեցության մեխանիզմը, ֆիզիկաքիմիական առանձնահատկությունները, ազդման օբյեկտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մաթևոսյան Ա.Ա., Գյուլխասյան Մ.Ա. - Բուսաբուծություն, Երևան, 2000թ., 400 էջ
2. Մելիքյան Ա.Շ. - Բանջարաբուծություն, Երևան, 2005թ., 503 էջ
3. Այվազյան Պ.Կ., Այվազյան Գ.Պ. - Խաղողագործություն սելեկցիայի և ամպելոգրաֆիայի հիմունքներով, Երևան, 2003թ. 629 էջ
4. Եդոյան Ռ.Հ. Բույսերի սելեկցիայի և սերմնաբուծության հիմունքներ, Երևան, 2006թ., 350 էջ
5. Սանթրոսյան Գ., Հովհաննիսյան Ա., Գաբրիելյան Գ. Պտղաբուծություն, ուսումնական ձեռնարկ, Երևան ՀԱԱՀ, 2014, 115 էջ

6. Հովհաննիսյան Ա. ՀՀ-ում առավել տարածված և արդյունավետ պտղատեսակների մշակությունը արդի տեխնոլոգիաներով, Երևան ՀԱԱՀ, 2016, 35 էջ
7. Ավագյան Գ.Վ. Գյուղատնտեսական ֆիտոպաթոլոգիայի պրակտիկում, Երևան ՀԳԱ, 2006, 142էջ
8. Ինտեգրացված պայքարի միջոցառումներ ՀՀ-ում առավել տարածված հիվանդությունների և վնասատուների դեմ, Երևան, Հայաստան, 2014, 51 էջ
9. Տեղեկատու ՀՀ-ում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների: Երևան, ՀՀ ԳՆ, 2016թ.
10. Биологическая защита растений : учебник.- М. : КолосС, 2004. - 264 с.
11. Ганиев, М. М. Химические средства защиты растений : учебное пособие. - М. : КолосС, 2006. - 248 с.
12. Защита полевых и плодовых культур от вредителей, болезней и сорняков : сборник научных трудов. - К.:, Изд-во УСХА, 1992. - 140 с.
13. Шкаликов В.А. Защита растений от болезней. Учебник для студентов высш.учеб.заведений.- 3-е изд., испр. и доп.- М.: КолосС, 2010. 404 с.
14. Семенкова И. Г., Соколова Э. С. Фитопатология: Учебник для студентов вузов. М.: Академия, 2003. 480 с.